ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1603

27.01.2016թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հունվարի 20-ին Դիտորդական խումբը, հերթական այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Արմավիրի ՁՊՎ, արձանագրել է Դիտորդական խմբի աշխատանքները խոչընդոտող փաստ և մի շարք թերություններ: Դրանք են՝

Դիտորդական խումբը ժամը 12^{15} մուտք գործելով տվյալ ոստիկանության բաժին, պարզեց, որ չի կարող համապատասխան ուսումնասիրություններ կատարել ՁՊՎ-ում, որովհետև ՁՊՎ-ի հերթապահ ոստիկանը տեղում չէր և ՁՊՎ-ի բանալիները գտնվում էին նրա մոտ: Հավելենք, որ ՁՊՎ-ի ոստիկանը ժամանեց մոտ 15 րոպե անց՝ 12^{30}-ին:

Թերություններ՝

- Խցերում բացակայում էին Դիտորդական խմբի կողմից տրամադրված <<Ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքների մասին>> գրքույկները:
- Չորրորդ խցում չկար արհեստական լուսավորություն:
- Չորրորդ խցի աթոռը պոկված էր հատակից:
- Ընդհանուր խցերը գտնվում են փոշոտ և թափթփված վիճակում:
- Մննդի տաքացման սենյակում բացակայում էր արհեստական լուսավորությունը:
- Սանհանգույցը գտնվում էր հակահիգիենիկ վիճակում. ամբողջությամբ գարշահոտ էր տարածված, կոյուղին խցանված էր, զուգարանի ջրահեռացման համակարգից անընդմեջ ջուր էր հոսում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՆ № 546
01 02 2016 թ.

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60,
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
E-mail: info@policemonitoring.org

ՀՀ Ոստիկանության Գլխավոր քարտուղարություն
Մուտք թիվ 512
01 02 2016 թ.

- ՀՊՎ-ի բուժենյակում առկա էր պարկով լի կեղտոտ սպիտակեղեն, որը ըստ պատասխանատու ոստիկանների մեկնաբանության դրվել էր լվանալ տալու նպատակով:

  Հարկ ենք համարում ավելացնել, որ սույն թվականի հունվարի մեկից մինչ այցելության օրը տվյալ ՀՊՎ-ում պահվել է ընդհանուր թվով մեկ անձ՝ հունվարի 1-ից մինչ 3-ը ընկած ժամանակահատվածում, և անհասկանալի էր նման քանակի կեղտոտ սպիտակեղենի առկայությունը ՀՊՎ-ում:

Այսպիսով, խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն դրանց վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60, Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք. Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-66-36, Ֆաքս՝ (010) 59-63-11

№ 2/2-1-1001 «17» 03 2016 թ.

Ձեր 27.01.2016թ. թիվ 2621/1603 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ի լրումն 03.03.2016թ. թիվ 2/2-1-804 գրության հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2016թ. հունվարի 20-ին ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արմավիրի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Դիտորդական խմբի այցելության ժամանակ ՁՊՎ-ում ձերբակալված կամ կալանավորված անձինք չեն եղել, իսկ ոստիկանը, ավագ տեսուչ-հերթապահի կողմից տրված ծառայողական բնույթի հանձնարարությունը կատարելու նպատակով կարճ ժամանակով բացակայել է ՁՊՎ տարածքից: Ծառայողական քննության արդյունքներով, վերոհիշյալ ոստիկանության ծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:

Թերություններ.

1. Դիտորդների խմբի կողմից տրամադրված <<Ձերբակալվածի իրավունքների մասին>> գրքույկները ձերբակալվածների կողմից ամփույթ օգտագործելու հետևանքով ժամանակի ընթացքում շարքից դուրս են եկել և կորցրել պիտանելիությունը, այդ իսկ պատճառով առկա չեն եղել խցերում:

Առաջարկվում է խմբի կողմից այցելություններ կատարելիս՝ ՁՊՎ վարչակազմերին տրամադրել նոր գրքույկներ:

2. 2-ից 8-րդ կետերում նշված թերություններն արդեն իսկ վերացվել են:

ՀՀ ոստիկանության շտաբ